




ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՅԸ ԱՊԱՀՈՎՈՂ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի կրթության որակի ապահովման բաժանմունքն իրականացրել է հետազոտություն՝ կրթական ոլորտում բարեփոխումների իրականացման նպատակով: Հարցումն անանուն էր, տվյալները ներկայացվում են ընդհանրացված տարբերակով: Կանխավ շնորհակալություն:






Նեւէ ,թէ որտե՞ղ ե՛ք սովորում:




### Մշտապես ապահովված եւ լսարաններով:




97% այո, 3% մասամբ ոչ

### Հարանի լուսավորությունը բավարարում է Ձեզ:




92% այո, 8% մասամբ այո

Հարաներում գործնական պարապմունքի ժամանակ ապահովված է՞լ լինում անհրաժեշտ տեխնիկայով  
/համակարգիչ և այլն/:



Լսարաններում գույքի /աթոռ, սեղան/ ֆանակը բավարարում է կուրսի ֆանակին:




**Ի՞նչպիսի փոփոխություններ կիրականացնեիք լսարաններում:**

- Նստարանները կփոխարինեի բարձր հենակ ունեցող աթոռներով:
- Սեղանների թեքությունն անհարմար է: Նստատեղերը պետք է լինեն փափուկ:
- Համակարգիչներ կտեղադրեի, պրայեկտորներ, գույքը կփոխեի (շատ անհարմար են նստարանները) օդորակիչներ կտեղադրեի:
- Աղբամանների պակաս կա:
- Լսարանում եղած սեղանները կփոխարինեի ուղիղ սեղաններով, քանի որ մեր ունեցածի վրա տեսր, գիրք դնելը, աշխատելը անհարմար է:


- Լսարանները ապահովել մարկերներով, իսկ օտար լեզուների գրատախտակը փոխել:
- Ավելացնել պայուսակները կամ այլ իրերը դնելու տեղ :
- Սեղանների դասավորությունը փոխվեր, դպրոցական աթոռ սեղաններից անցում կատարեինք ավելի լայն քննարկումների համար նախատեսված ձևի:
- Եթե հնարավոր է գիտնականների նկարներ ավելացնել:
- Օդորակիչ տեղադրել:
- Փոխել շերտավարագույրները:
- Կցանկանայի որպեսզի փոխվեին գրատախտակները:
- Համակարգիչների տեղադրում բոլոր լսարաններում:
- Ես կցանկանայի որ, լսարաններում լինե՞ր ծաղիկներ, քանի որ ծաղիկները շատ հետաքրքիր աուրա են հաղորդում մարդկանց:
- Կրճատել դասաժամերը(70 րոպե)
- Տեղադրել մոնիտորներ
- Դասախոսի սեղանը կդնե՞ի ուսանողների սեղաններից մի փոքր հեռու:
- Ապահովել մեզ մարկերներով, որպեսզի մեր գումարով չգնենք:
- Նստարանների դասավորությունը այնպես փոխել, որ լույսը ձախից ընկնի:




Օգտվում է՞ գրադարաններից:



Գրադարանը ապահովում է Ձեզ անհրաժեշտ մասնագիտական գրականությամբ:




Պատվիրված գրքերը նիւտ ժամանակին տրվում են Ձեզ:




*Հաջորդիվ գրադարանի լուսավորությունը բավարարու՞մ է Ձեզ հարցին բոլորը պատասխանել են այո:*


Գրադարանում առկա՞ է տրամադրող լուսություն:




Գրադարանում ընթերցելը կամ աշխատելը ցանկալի՞ք է Ձեզ համար:



Գրադարանում առկա տեխնիկան /համակարգիչ/ բավարարու՞մ է Ձեզ:




### Ծանոթ է՝ գրադարանից օգտվելու կանոններին



Գրադարան այցելելու ընթացքում ինչ խոչընդոտների էք հանդիպել հարցին ուսանողները պատասխանել են հետևյալը.


- Մասնագիտական գրականության պակաս:
- Աշխատակիցների կողմից բարյացակամ վերաբերմունքի պակաս:
- Մասնագիտական գրականության հայալեզու գրքերի կարիք կա:
- Միայն տպաքանակի պակաս է լինում:
- Դեպքեր են լինում, երբ նստելու տեղ չի լինում:
- Կոպիտ են աշխատակիցները և չոր, չեն կարողանում մեզ օգնել ընտրելու հարցում, շատ դեպքերում տեղյակ չեն հարցված գրքի մասին: Ցավալի է:
- Ներկա պահին արդեն մի ամիս է սպասում եմ գրքին:

Օգտվում եմ մասնագիտական կաբինետներից /եթե ոչ անցնել  
ամենավերջին հարցին/






Մասնագիտական կաբինետները հասանելի<sup>o</sup> են Ջեզ գործնական պարապմունքները կազմակերպելու համար:



Մասնագիտական կաբինետների սարքավորումները թու՞յլ են տալիս լիարժեք կերպով կազմակերպել Ձեր գործնական պարապմունքները:



**Ի՞նչպիսի փոփոխություններ կիրականացնեիք մասնագիտական կաբինետներում:**

- Ավելացնել մասնագիտական կաբինետները և տեխնիկան:
- Փոխել լուսավորության համակարգը:
- Մասնագիտական տեխնիկան՝ սարքավորումներ, գործիքներ, նյութեր և այլն ավելի տեսանելի կդասավորելի ուսանողների համար, որպեսզի որոշ ուսանողներ, գոնե, դրանք տեսնելուց հետո հետաքրքրություն ցուցաբերեն առարկայի հանդեպ:
- Ավելացնել կրիմինալիստիկայի կաբինետում աթոռ և սեղան, կրակայինի կաբինետում լազերային հրաձգության համար նախատեսված գույքը չի աշխատում:

**Ինչպիսի՞ փոփոխություններ կիրականացնեիք ՀՀ ոստիկանության Կրթահամալիրում ուսումնական գործընթացն արդյունավետ կազմակերպելու համար:**

- Կավելացնել գործնական պարապունքները: Դասընթացներն ավելի պրակտիկ կդարձնեի՝ չսահմանափակվելով տեսական նյութը յուրացնելով:
- Վերացնել անգրագետ ուսանողների քանակը, որպեսզի դասաժամից գոնե 50 տոկոս տրամադրվի նորմալ դասին: Շնորհակալություն:
- Շատ ժամեր կհատկացնեի մասնագիտական առարկաններին:
- Ուսումնական գործընթացը շատ արդյունավետ է, փոփոխությունների կարիք չկա:
- Վատ վարքով, անգրագետ ուսանողներին կհանելի ոստիկանների շարքերից, կան մարդիկ, որոնց քաղաքացիական կյանքի պատճառով վարկաբեկվում է ողջ կրթահամալիրը: Ուսանողների մեջ սկսվել է գողություն, սա ամենավատն է իմ կարծիքով, մեր մեջ հանցագործներ չպետք է լինեն:
- Ստեղծվեին լրացուցիչ դասեր առանց գնահատման գիտելիք յուրացնելու նպատակով:
- Դասապրոցեսը իրականացվի երկու դասախոսի կողմից միաժամանակ:
- Յուրաքանչյուր բան կաշխատեի լինել փորձնական, որպեսզի լինել արդյունավետ շատերի համար:
- Կցանկանայի որպեսզի լսարաններում տեղադրված սարքավորումները օգտագործվեին դասերի ընթացքում:
- Քոլեջի 2 րդ կուրսում դասավանդվել վարչական վարույթ առարկա:
- Ուսումնական ինտերակտիվ մեթոդի կիրառում ավելի շատ:
- Կցանկանայի հնարավորություն լինել մասնակցելու որևէ դատավարության:
- Դասախոսությունների ժամանակ դասախոսը կարող է նախապես տեղեկացնել հաջորդ դասի մասին ,որպեսզի ուսանողները պատրաստվեն դասախոսությանը:Դասախոսության ժամանակ դասախոսը ուսանողներին կարող

է բաժանել թիմերի՝ որպէս մրցակից բանավիճողներ , և յուրաքանչյուր սխալի դեպքում ուղղել նրանց: Այդպէս ուսանողները նախ ստիպված չեն լինի միայն լսես և դասի դեռ կեսին քնել , կարծում եմ հոգնեցուցիչ է անընդհատ լսել, ի վերջո ինքը՝ դասախոսը չի հոգնի միայնակ խոսելուց , բանավեճից ուսանողը բացահայտում է իրեն , իր կարողությունները , և դասը արդեն հասկացած գնում է տուն : Մեմինարի ժամանակ մնում է պարզապէս ճշգրտել գիտելիքները , համակարգել , կատարելագործել և դառնալ լավ իրավագետ:

- Դասերի ծավալը քչացնել:
- Անգրագետ ուսանողներին և ուսանողներին, որոնք ամեն հետաքրքրություն ունեն բացի ուսումից կհանեի մեր շարքերից:
- Պրակտիկայի ժամաքանակի ավելացում
- 7-8 դասաժամերը կհեռացնեի: Եվ կրթական ծրագրում կներառեի հայոց լեզուն և գրականությունը պարտադիր, որոնք կուսումնասիրեինք բոլոր կուրսերում:
- Որոշ փոփոխություններից հետո դասախոսները նյութը չեն թելադրում ես կողմ եմ նախկին մեթոդին:
- Կցանկանայի, որ դասախոսների կողմից խրախուսող ինչ որ բաներ լինեին, որպեսզի մոտիվացիա առաջանար շատերի մոտ:
- Կրճատել դասաժամերը:
- Ավելացնել սովորողների պրակտիկա անցնելու ժամանակահատվածը, և ավարտական պրակտիկան կազմակերպել սովորողի հաշվառման վայրում:
- Դասերն ավատարվեն առնվազն 14:00:
- Չեի թողնի , որ սովորողները ներգրավվեն քաղաքի, մարզերի և այլ միջոցառումների ծառայությանը: Իսկ ծառայության ընթացքում բացթողնված դասերը չէի լրացնի սովորողների հանգստի օրերի հաշվին:

- Արդյունավետ կլիներ տեսականից բացի գործնական պարապմունքներին ևս շատ ուշադրություն դարձվեր օրինակ դատախազերի կազմակերպմանը:
- Լիկվիդների քանակի փոփոխում:
- Դասաժամանակը կցանկանայի կրճատվեր կամ ընդմիջումով լիներ: Ուսանողությունը հնարավորություն ունենար դասից դուրս գալու թարմանալու նպատակով:
- Կցանկանայի, որ տեսականը համադրվեր գործնականի հետ հատկապես քրեական դատավարության դասին, նաև կցանկանայի այցելելինք դատարաններ:
- Կխնդրեի, որ դասախոսները ուսանողներին գնահատեին ճշգրիտ, այսինքն՝ եթե մենք դաս ենք պատասխանում թող մեզ գնահատեն մեր պատասխանածի չափով ոչ թե մեզ հետ ունեցած համակրանքով, այս պարագայում մեզ մոտ կորում է մոտիվացիան:
- Կցանկանայի լինելին անհատական վճարովի-անվճար պարապմունքներ:
- Ստեղծել էլեկտրոնային գրատախտակ: Գրքեր կան 1 օրով են տրվում, կցանկանայի ժամկետը երկարացնել, կան գրքեր որոնք ընդհանրապես գոնե որոշակի ժամկետով չեն տրամադրում, իսկ գեղարվեստական գրքերը քիչ են: Կցանկանայի լինել 40 րոպե դասի անցկացում, 10 րոպե ընդմիջում, 40 րոպե դաս, քանի որ ֆիզիկապես անհնար է 80ր նստել:
- Կցանկանայի իրականացվեր ինտելեկտուալ խաղ:
- Կցանկանայի ամեն օր լսարանը մաքուր լինի: Մարկերները հաճախ են վերջանում: Շատ են սեղանները, աթոռները, անիմաստ տեղ են գրավում և փոշիի առիթ է: Շերտավարագույրները վնասված են կարելի է փոխել օրինակ թղթեր փակցնելով ապակիներին՝ խնայելով գումարը: Ինձ և շատերին դուր չեն գալիս, երբ առաջին իսկ

այցից շանտաժ են անում քննություններով, ստուգարքներով: Բայց բոլորն էլ հոյակապ մասնագետներ են և տրամադրում են մաքսիմալ: Միայն որոշները շանտաժիստներից հետո:

- Պատճենահանման համար սարքերի անհրաժեշտություն կա թեկուզ և վճարովի:
- Կավելացնելի վարդակները, կապահովելի ինտերնետով, կապահովելի օդորոկիչներ: Կցանկանայի լողավազանը ջրով ապահովելիք, տրամադրվեր ժամեր օգտվելու համար: Լսարաններում առկա լինեին ինտերնետ սարքավորումներ:
- Ցանկալի է, որ շատ լսարաններում լինեն պրոյեկտորներ, որպեսզի դրա պատճառով կարիք չլինի փոխել լսարանը: Կցանկանայի, որ լեկցիաները թարմացվեին, օրինակները տրամադրվեին գրադարանին և գործնական պարապմունքները ավելացվեին:
- Կինդրեի մեղմ վերաբերվել բացակայություններին, քանի որ շատերը աշխատում են: Կցանկանայի լիներ wi fi:
- Կցանկանայի տեղադրվեր էլեկտրոնային գրատախտակ: Միայն կրիմինալիստիկայի սենյակն է ապահովված տեխնիկայով: Ժայռուները կիսասարք են: Մաքրություն տեղի չի ունենում, միայն անձեռոցիկներն են դարակներից հավաքվում: Գրքերի քանակը չի բավարարում, նոր հրատարակված գրքերը էլ ավելի քիչ են: Գրքերը թույլ չեն տալիս ուսանողը վերցնի, միայն թույլ են տալիս տեղում կարդալ: Կցանկանայի իրականացվեին հնարավորինս շատ պրակտիկ աշխատանքներ:
- Կցանկանայի դասերը բաժանվեր 2 մասի՝ 80ր՝ 40-40, 5ր ընդմիջումով:
- Կցանկանայի, որ մասնագիտական առարկաները 4-րդ կուրսում ուսումնասիրեինք:
- Վերանորոգել վերելակը:
- Մունիցիպալ իրավունքի շրջանակներում մենք ունեցել ենք արդեն 4 դասախոսություն, բայց դեռ սեմինար չենք ունեցել ու դա իմ կարծիքով այդքան էլ արդունավետ չէ:

- Կցանկանայի փոխեիք քաղաքացիական իրավունքի դասախոսին, քանի որ լավ չի բացատրում:
- Կցանկանայի պարապմունքներն անցկացվեին խմբերով մինչև 15 հոգի, որպեսզի գիտելիքները որոնք մատուցվում են լինեն ընկալելի:
- Ցանկալի է, որ վճարովի ուսուցման համակարգում դասացանկի մեջ ավելացվի հրաձգություն առարկան:
- Բացակաների քանակը շատացնել:
- Կցանկանայի, որ փոխվեր քաղաքացիական իրավունքի դասախոսը: չունեմ անձնական խնդիր, ուղղակի ակնկալում եմ ավելի լավ մասնագետի, որպեսզի նյութը չի ավելի լավ ու մատչելի ձևով հասկանանք:
- Ընթերականեր չլինեն, դա ավելորդ լարվածություն է:
- Դասախոսություններ չթելադրեն, որովհետև կենտրոնանում ենք գրելու վրա և ոչինչ չենք լսում: Քննությունները շատ խիստ են, բոլորը գերազանցի պատասխանեն, այլ ոչ թե իրենց ուժերի սահմաններում: Վճարովի և անվճար սովորողների միջև տարբերություններ չդրվեն:
- Ինչու մեզ չեն տրամադրում այն աթոռներից, որ ունեն մնացած լսարանները սև փափուկ: Կցանկանայի ապահովվեիք համակարգիչներով և համացանցով և թող գաղտնաբառը միայն դասախոսն իմանար: Ես չունեմ համակարգիչ, բայց ակադեմիան ունենալով չի տրամադրում պատշաճ վիճակում: Ստեղծել արհեստական դատարաններ խաղերի համար, ձևերը շաբաթ և կիրակի օրերին ջեռուցումը չանջատել, որովհետև երկուշաբթի և երեքշաբթի վերարկուով անգամ մրսում ենք: Խնդրում ենք, որ պայմանագրային դասախոսներ չլինեն, միայն համազգեստով դասախոսներ դասավանդեն: Դասախոսները թող հարգեն ուսանողի իրավունքները:
- Կցանկանայի, որ դասերը չանցնեին լարված և վախի միջավայրում:
- Լինում է, որ գրադարանում գիրքը կա, բայց ասում են անվճարների համար է: Ճաշարաններում հերթի վերացում: Սեմինարների ավելացում:

- Առաջարկում եմ ստեղծել համապատասխան կայք, որը հնարավորություն կտա ներբեռնել բոլոր դասախոսությունները: Անհատական փոխանցումները ժամանակ են խլում՝ ֆլեշ-կրիչներով, միմյանցից արտատպելով: Յուրաքանչյուրը կարող է ունենալ իր կողը, գաղտնաբառը, որով կարող է մուտք գործել կայք և ներբեռնել անհրաժեշտը:
- Կարելի է ավելացնել սեղանների քանակը, հետևել մաքրությանը:
- Կցանկանայի, որ անմիջական կապի մեջ լինեինք դատարանի հետ և պարբերաբար այցելեինք:
- Կցանկանայի, որ վճարովի սովորողների նույնպես սովորոցնեին ոստիականական գործ և մասնագիտական հմտություններ: